Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-342-05.11.2019-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները, ինչպես նաև կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներ շնորհելու և հանձնելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները սահմանվում են սույն հոդվածի 2-րդ մասում նշված բնագավառներում կատարված նախաձեռնությունները և գործունեության արդյունքները ճանաչելու, գնահատելու, խրախուսելու և խթանելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներն են՝

1) գրականության և հրապարակախոսության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

2) երաժշտության և կատարողական արվեստների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

3) կերպարվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

4) թատերական արվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

5) կինոարվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

6) ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

7) ճշգրիտ և բնական գիտությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

8) հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

9) աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

10) բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ:

11) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ձեռքբերման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ:

3. Պետական մրցանակների շնորհման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Կառավարությունն իրավասու է ընդունելու որոշում՝ մրցանակների այլ տեսակներ սահմանելու, դրանք շնորհելու և հանձնելու կարգի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 4. Ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները մրցանակի ներկայացնելը

1. Նույն ստեղծագործությունը, հայտնագործությունը (գյուտը) և աշխատանքը մրցանակի կարող է ներկայացվել միայն մեկ անգամ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի կարող են ներկայացվել միայն այն ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը),

աշխատանքները և ձեռքբերումները, որոնք առաջին անգամ իրագործվել (հրատարակվել, հրապարակվել, կատարվել, ցուցադրվել, կառուցվել-ավարտվել, բեմադրվել և այլն) են գրականության, հրապարակախոսության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների, աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում՝ մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման ժամկետն ավարտվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում:

3. Գրականության և հրապարակախոսության, երաժշտության և կատարողական արվեստների, կերպարվեստի, թատերական արվեստի, կինոարվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների աշխատանքները մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ստեղծագործական միավորումների, ինչպես նաև այն կազմակերպությունների կողմից, ում կանոնադրական նպատակներն ու խնդիրները ներառում են նշված ոլորտները և որոնք պետական գրանցման օրվանից առնվազն 3 տարի ծավալել են համապատասխան գործունեություն:

4. Ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտներում հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, բաժանմունքների, գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպության, պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի գիտական խորհուրդների կողմից՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

5. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հայցման համար աշխատանքների առաջադրման իրավունք է վերապահվում՝

1) ֆիզիկայի բնագավառում՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներին.

2) գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը.

3) ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտական խորհրդին.

4) Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնին:

6. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի աշխատանքները պետական մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

7. Ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները պետական մրցանակի հայցման ներկայացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հավակնորդների ընտրությունը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները շնորհվում են լավագույն ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների հեղինակներին, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, բարձր տեխնոլոգիաների ոլորտում աշխատանքներ կատարած կամ նշանակալից ձեռքբերումներ ունեցած անձանց:
2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի հայցման ներկայացված ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները քննարկում, մրցանակի հավակնորդների ընտրությունը կազմակերպում և անցկացնում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովները (այսուհետ՝ հանձնաժողովներ), որոնք ձևավորվում են առանձին՝ ըստ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտների:
3. Բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար պետական մրցանակի թեկնածուների հավակնորդների ընտրությունն իրականացվում է մրցանակաբաշխության կոմիտեի կողմից:
4. Մրցանակների հավակնորդների ընտրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) եւ աշխատանքների արժեքավորությունը, նշանակությունը տվյալ ոլորտի զարգացման համար և այլ չափանիշներ, որոնք սահմանվում են հանձնաժողովների կամ մրցանակաբաշխության կոմիտեի կողմից:
5. Մրցանակների հավակնորդների ընտրության արդյունքները չեն կարող բողոքարկվել:

Հոդված 6. Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կողմիտեի գործունեության սկզբունքները

1. Հանձնաժողովները և մրցանակաբաշխության կողմիտեն գործում են օբյեկտիվության, անաչառության, թափանցիկության և կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

Հոդված 7. Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման կարգը

1. Հանձնաժողովներից յուրաքանչյուրը բաղկացած է նախագահից և անդամներից, ովքեր հանձնաժողովների կազմում ընդգրկվում են իրենց համաձայնությամբ և իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

2. Հանձնաժողովների կազմում ընդգրկվում են՝

1) երկու անդամ՝ առաջադրված այն հասարակական կազմակերպությունների կողմից, ում կանոնադրական նպատակները և խնդիրները ներառում են համապատասխան ոլորտները, և որոնք պետական գրանցման օրվանից առնվազն 3 տարի ծավալել են համապատասխան գործունեություն,

2) երկու անդամ՝ առաջադրված համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության կողմից,

3) երեք անդամ՝ համապատասխան ոլորտում ավանդ ունեցած հեղինակավոր մասնագետներից, որոնց առաջադրում է Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը,

4) երեք անդամ՝ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ նշանակված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի կողմից առաջադրված անձանցից:

3. Հանձնաժողովները համարվում են ձևավորված, եթե հաստատվել են անդամների կեսից ավելին:

4. Հանձնաժողովների անդամի թեկնածու կարող է ընտրվել՝ յուրաքանչյուր ոք, ով օժտված է բարձր մասնագիտական որակներով, անաչառությամբ, իր ոլորտի հեղինակավոր մասնագետ կամ հանրային հեղինակություն վայելող անձ է:

5. Հանձնաժողովների անդամ չի կարող նշանակվել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության կատարման համար կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող:

6. Հանձնաժողովները իրենց կազմից ընտրում են Հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովների անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է:
7. Հանձնաժողովների անդամներն իրենց ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների համար չեն կարող հավակնել սույն օրենքով սահմանված պետական մրցանակներ ստանալուն:
8. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված թեկնածուներին ներգրավելու նպատակով համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալուց առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են մեկական թեկնածու: Մրցույթի արդյունքում ընտրված թեկնածուների վերաբերյալ տվյալները ներկայացվում են վարչապետի աշխատակազմ:
9. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասները սահմանում է Կառավարությունը:

10. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված թեկնածուներին ներգրավելու նպատակով Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալուց առնվազն երեսուն օր առաջ կարող է հայտարարություն տարածել հանձնաժողովների անդամի թեկնածու ընտրվելու համար ինքնառաջադրում իրականացնելու հնարավորության վերաբերյալ:
11. Հանձնաժողովների անդամների լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն մեկ շաբաթ առաջ թեկնածուների վերաբերյալ տվյալները առաջադրող մարմինների կողմից ներկայացվում են վարչապետի աշխատակազմին:
12. Հանձնաժողովների անհատական կազմերը հաստատվում են վարչապետի կողմից:
13. Հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:
14. Մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ անհատական կազմը հաստատվում է վարչապետի կողմից:

Հոդված 8. Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման առաջարկություն ներկայացնելը

1. Հանձնաժողովները և մրցանակաբաշխության կոմիտեն մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները Վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետները և դրանք քննարկելու կարգն ու ժամկետները սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները շնորհում է վարչապետը՝ համապատասխան որոշմամբ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները, բացառությամբ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի, շնորհվում են երկու տարին մեկ անգամ:

3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր տարի:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հանձնումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները հանձնում է վարչապետը կամ վարչապետի հանձնարարությամբ Կառավարության այլ անդամ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները հանձնելու ժամկետները սահմանում է Կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակը ստեղծագործության համահեղինակների շնորհվելու դեպքում մրցանակի մաս կազմող դրամական պարգևը հավասար բաշխվում է համահեղինակների միջև, յուրաքանչյուրին հանձնվում է նաև կրծքանշան և վկայագիր:

4. Մահացած դափնեկրի կրծքանշանը և վկայագիրը հանձնվում են նրա ընտանիքին, իսկ դրամական պարգևը փոխանցվում է նրա ժառանգներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՔՆԵՐԸ

Հոդված 11. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների բաղադրիչները

1. Գրականության և հրապարակախոսության, երաժշտության և կատարողական արվեստների, կերպարվեստի, թատերական արվեստի, կինոարվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտներում որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում են մրցանակի դափնեկրի կրծքանշան, վկայագիր և դրամական պարգև:

2. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի համար շնորհվում են մրցանակի դափնեկրի դիպլոմ, պատվոնշան՝ այն հավաստող հավաստագրով, դրամական պարգև, ինչպես նաև դրամական միջոցներ՝ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգով տնօրինելու իրավունքով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դրամական միջոցները, մրցանակ ստանալու հաջորդ երկու տարվա ընթացքում, օգտագործվում են Հայաստանի Հանրապետությունում աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառների հետագա զարգացման համար ըստ հետևյալ նպատակների՝

1) գիտական հետազոտությունների աջակցության մրցույթի կազմակերպմանը.

2) գիտաշխատողների՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններ գործուղումների ֆինանսավորմանը.

3) Հայաստանի Հանրապետությունում գիտաժողովների կազմակերպմանը.

4) պետական բուհերում մագիստրոսի ուսումնական ծրագրով ուսումնառող ուսանողների կրթաթոշակներին ուղղելու համար.

5) մրցանակի արժանացած աշխատանքի և դափնեկրի (դափնեկիրների) այլ աշխատանքների հանրայնացման համար:

4. Մրցանակակիրը սույն հոդվածի 3-րդ մասի 2-5-րդ կետերով նախատեսված միջոցառումների ֆինանսական միջոցների չօգտագործման կամ ոչ լրիվ օգտագործման դեպքում հավելյալ միջոցներն ուղղում է սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպմանը, իսկ վերջինիս ֆինանսական միջոցների

չօգտագործման կամ ոչ լրիվ օգտագործման դեպքում հավելյալ ֆինանսական միջոցները գումարում է գիտական հետազոտությունների աջակցության հաջորդ մրցույթի կազմակերպման ֆինանսական միջոցներին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցառումների իրականացման պայմանները, միջոցառումների համակարգման, վերահսկման, ինչպես նաեւ դրամական միջոցները մրցանակակրին փոխանցելու կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Բարձր տեխնոլոգիաների բնագավառում համաշխարհային ներդրման համար որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում են հուշամեդալ, վկայագիր և հուշախորհրդանիշ:

7. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում է վկայագիր և հուշամեդալ:

8. Գրականության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառներում շնորհվող Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիրների վկայագրերի ձևը, դափնեկրի կրծքանշանի նկարագրությունը և ձևը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ոլորտում ձեռքբերման համար դափնեկրի վկայագրի ձևը, բարձր տեխնոլոգիաների բնագավառում համաշխարհային ներդրման համար դափնեկրի վկայագրի ձևը, դափնեկրի հուշամեդալի, հուշախորհրդանիշի նկարագրությունը և ձևը, Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի դիպլոմի ձևը, պատվոնշանի ձևը և նկարագիրը, պատվոնշանը հավաստող հավաստագրի ձևը սահմանում է Կառավարությունը:

9. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում նշված դրամական պարգևների և դրամական միջոցների չափերը սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակաբաշխության և մրցանակի հավաստիքների պատրաստման ֆինանսավորումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովների գործունեության, մրցանակաբաշխության կազմակերպման,

մրցանակների մաս կազմող վկայագրերի, կրծքանշանների, հուշամեդալների, հուշախորհրդանիշի, Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի դիպլոմի, պատվոնշանի և այն հավաստող հավաստագրի պատրաստման և Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մաս կազմող դրամական պարգեւների և դրամական միջոցների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ 7

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 13. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 14. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հնգամսյա ժամկետում ընդունվում են սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, 4-րդ հոդվածի 7-րդ մասով, 7-րդ հոդվածի 9-րդ, 13-րդ և 14-րդ մասերով, 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված իրավական ակտերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները, ինչպես ~~նաեւ~~նաև կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներ շնորհելու ~~եւ~~և հանձնելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով ~~եւ~~և այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները

1. ~~Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները գրականության եւ արվեստի բնագավառում՝ բարձրարժեք ստեղծագործությունների, ճարտարապետության եւ քաղաքաշինության բնագավառում՝ լավագույն աշխատանքների (ինքնատիպ նախագծերի եւ Հայաստանի Հանրապետության տարածքում ավարտված շինությունների կամ համալիրների), ճշգրիտ եւ բնական գիտությունների բնագավառում՝ հայրենական ու միջազգային գիտությունը էապես հարստացրած եւ գիտատեխնիկական առաջընթացի վրա էական ազդեցություն ունեցող նշանակալի, ակնառու հայտնագործությունների (գյուտերի), հումանիտար եւ հասարակական գիտությունների բնագավառում՝ արժեքավոր աշխատանքների, աստղաֆիզիկայի, ինչպես նաեւ դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում՝ ակնառու գիտական աշխատանքի, բարձր տեխնոլոգիաների բնագավառում՝ ոլորտի զարգացման եւ կատարելագործման, ինչպես նաեւ ակնառու ձեռքբերումների ճանաչման, գնահատման եւ խրախուսման ձեւ են:~~Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները սահմանվում են սույն հոդվածի 2-րդ մասում նշված բնագավառներում կատարված նախաձեռնությունները և գործունեության արդյունքները ճանաչելու, գնահատելու, խրախուսելու և խթանելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներն են՝

1) գրականության ~~եւ~~և հրապարակախոսության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

2) երաժշտության ~~եւ~~և կատարողական արվեստների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

3) կերպարվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

4) թատերական արվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

5) կինոարվեստի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

6) ճարտարապետության ~~եւ~~և քաղաքաշինության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

7) ճշգրիտ ~~եւ~~և բնական գիտությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

8) հումանիտար ~~եւ~~և հասարակական գիտությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

9) աստղաֆիզիկայի, ինչպես ~~նաեւ~~նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ.

10) բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ:

~~3. Կառավարությունն իրավասու է սահմանելու~~

11) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ձեռքբերման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ:

3. Պետական մրցանակների ~~այլ տեսակներ, որոնց~~ շնորհման ~~եւ~~և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Կառավարությունն իրավասու է ընդունելու որոշում՝ մրցանակների այլ տեսակներ սահմանելու, դրանք շնորհելու և հանձնելու կարգի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 4. Ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) ~~եւ~~և աշխատանքները մրցանակի ներկայացնելը

1. Նույն ստեղծագործությունը, հայտնագործությունը (գյուտը) ~~եւ~~և աշխատանքը մրցանակի կարող է ներկայացվել միայն մեկ անգամ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի կարող են ներկայացվել միայն այն ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը~~) եւ~~), աշխատանքները և ձեռքբերումները, որոնք առաջին անգամ իրագործվել (հրատարակվել, հրապարակվել, կատարվել, ցուցադրվել, կառուցվել-ավարտվել, բեմադրվել ~~եւ այլն) են~~՝և այլն) են գրականության, հրապարակախոսության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների, աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում, ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի ոլորտում՝ մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման ժամկետն ավարտվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում:

~~1) գրականության,~~3. Գրականության և հրապարակախոսության~~ եւ~~, երաժշտության և կատարողական արվեստների, կերպարվեստի, թատերական արվեստի, կինոարվեստի, ճարտարապետության ~~եւ~~և քաղաքաշինության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների աշխատանքները մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ստեղծագործական միավորումների, ինչպես նաև այն կազմակերպությունների կողմից, ում կանոնադրական նպատակներն ու խնդիրները ներառում են նշված ոլորտները և որոնք պետական գրանցման օրվանից առնվազն 3 տարի ծավալել են համապատասխան գործունեություն:

4. Ճշգրիտ և~~ճշգրիտ եւ~~ բնական գիտությունների, հումանիտար ~~եւ~~և հասարակական գիտությունների ոլորտներում հայտնագործությունները (գյուտերը) և աշխատանքները մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակների, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, բաժանմունքների, գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպության, պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի գիտական խորհուրդների կողմից՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

5. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հայցման համար աշխատանքների առաջադրման իրավունք է վերապահվում՝

1) ֆիզիկայի բնագավառում՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներին.

2) գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը.

3) ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտական խորհրդին.

4) Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և~~,~~ աստղաֆիզիկայի ամբիոնին:
~~, ինչպես նաեւ դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում՝ մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման ժամկետն ավարտվելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում.~~

~~2) բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման ժամկետն ավարտվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում:~~

~~3~~

6. Բարձր տեխնոլոգիաների ոլորտի աշխատանքները պետական մրցանակի հայցման համար կարող են ներկայացվել հեղինակի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից:

7. Ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) ~~եւ~~և աշխատանքները պետական մրցանակի հայցման ներկայացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

~~***Հոդված 5. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման առաջարկություն ներկայացնելը***~~

~~1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող համապատասխան հանձնաժողովի եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ են ներկայացվում համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող նախարարի կողմից:~~

~~2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետները սահմանում է Կառավարությունը:~~

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Հոդված ~~6.~~5. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հավակնորդների ընտրությունը

6. ~~1.~~ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները շնորհվում են լավագույն ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) ~~եւ~~և աշխատանքների հեղինակներին, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, բարձր տեխնոլոգիաների ոլորտում ~~ավանդ~~աշխատանքներ կատարած կամ նշանակալից ձեռքբերումներ ունեցած անձանց:

7. ~~2.~~ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի հայցման ներկայացված ստեղծագործությունները, հայտնագործությունները (գյուտերը) ~~եւ~~և աշխատանքները քննարկում, մրցանակի հավակնորդների ընտրությունը կազմակերպում ~~եւ~~և անցկացնում են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովները (այսուհետ՝

հանձնաժողովներ~~)։~~), որոնք ձևավորվում են առանձին՝ ըստ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտների:

~~8. 3. Բարձր~~

~~9.~~8. Բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար պետական ~~մրցանակների~~մրցանակի թեկնածուների ~~նախնական~~ հավակնորդների ընտրությունն իրականացվում է մրցանակաբաշխության կոմիտեի ~~(այսուհետ՝ մրցանակաբաշխության կոմիտե)~~ կողմից:

~~4. Հանձնաժողովներից յուրաքանչյուրը, մրցանակաբաշխության կոմիտեն բաղկացած են առնվազն ինը անդամից:~~

~~10. 5. Հանձնաժողովների անդամները~~

9. Մրցանակների հավակնորդների ընտրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) եւ աշխատանքների արժեքավորությունը, նշանակությունը տվյալ ոլորտի զարգացման համար և այլ չափանիշներ, որոնք սահմանվում են հանձնաժողովների կամ մրցանակաբաշխության կոմիտեի կողմից:

10. Մրցանակների հավակնորդների ընտրության արդյունքները չեն կարող բողոքարկվել:

Հոդված 6. Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կողմիտեի գործունեության սկզբունքները

1. Հանձնաժողովները և մրցանակաբաշխության կողմիտեն գործում են օբյեկտիվության, անաչառության, թափանցիկության և կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

Հոդված 7. Հանձնաժողովների և~~անդամները համապատասխանաբար հանձնաժողովների եւ~~ մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման կարգը

1. Հանձնաժողովներից յուրաքանչյուրը բաղկացած է նախագահից և անդամներից, ովքեր հանձնաժողովների կազմում ընդգրկվում են իրենց համաձայնությամբ ~~եւ~~և իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

~~6. Հանձնաժողովները, մրցանակաբաշխության կոմիտեն ստեղծվում եւ դրանց անհատական կազմերը հաստատվում են~~

2. Հանձնաժողովների կազմում ընդգրկվում են՝

1) երկու անդամ՝ առաջադրված այն հասարակական կազմակերպությունների կողմից, ում կանոնադրական նպատակները և խնդիրները ներառում են համապատասխան

ոլորտները, և որոնք պետական գրանցման օրվանից առնվազն 3 տարի ծավալել են համապատասխան գործունեություն,

2) երկու անդամ՝ առաջադրված համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող ~~եւ~~և իրականացնող նախարարությանՆախարարի կողմից,

~~÷~~

~~7~~

3) երեք անդամ՝ համապատասխան ոլորտում ավանդ ունեցած հեղինակավոր մասնագետներից, որոնց առաջադրում է Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը,

4) երեք անդամ՝ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ նշանակված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի կողմից առաջադրված անձանցից:

3. Հանձնաժողովները համարվում են ձևավորված, եթե հաստատվել են անդամների կեսից ավելին:

4. Հանձնաժողովների անդամի թեկնածու կարող է ընտրվել՝ յուրաքանչյուր ոք, ով օժտված է բարձր մասնագիտական որակներով, անաչառությամբ, իր ոլորտի հեղինակավոր մասնագետ կամ հանրային հեղինակություն վայելող անձ է:

5. Հանձնաժողովների անդամ չի կարող նշանակվել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության կատարման համար կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող:
6. Հանձնաժողովները իրենց կազմից ընտրում են Հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովների անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է:
7. Հանձնաժողովների անդամներն իրենց ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) և աշխատանքների համար չեն կարող հավակնել սույն օրենքով սահմանված պետական մրցանակներ ստանալուն:
8. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված թեկնածուներին ներգրավելու նպատակով համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալուց առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի շրջանակներում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են մեկական թեկնածու: Մրցույթի արդյունքում ընտրված թեկնածուների վերաբերյալ տվյալները ներկայացվում են վարչապետի աշխատակազմ:
9. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգն ու մանրամասներըեւ մրցանակաբաշխության կոմիտեի կազմավորման եւ գործունեության կարգերը սահմանում է Կառավարությունը:

10. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված թեկնածուներին ներգրավելու նպատակով Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունը հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալուց առնվազն երեսուն օր առաջ կարող է հայտարարություն տարածել հանձնաժողովների անդամի թեկնածու ընտրվելու համար ինքնառաջադրում իրականացնելու հնարավորության վերաբերյալ:
11. Հանձնաժողովների անդամների լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն մեկ շաբաթ առաջ թեկնածուների վերաբերյալ տվյալները առաջադրող մարմինների կողմից ներկայացվում են վարչապետի աշխատակազմին:
12. Հանձնաժողովների անհատական կազմերը հաստատվում են վարչապետի կողմից:
13. Հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:
14. Մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ անհատական կազմը հաստատվում է վարչապետի կողմից:

Հոդված 8. Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման առաջարկություն ներկայացնելը

1. Հանձնաժողովները և մրցանակաբաշխության կոմիտեն մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկությունները Վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետները և դրանք քննարկելու կարգն ու ժամկետները սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Հոդված ~~7.~~9. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների շնորհումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները շնորհում է վարչապետը՝ համապատասխան որոշմամբ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները, բացառությամբ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի, շնորհվում են երկու տարին մեկ անգամ:

~~3. Բարձր~~3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր տարի:

Հոդված ~~8.~~10. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների հանձնումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները ~~հանձ?նում~~հանձնում է վարչապետը կամ վարչապետի հանձնարարությամբ Կառավարության այլ ~~անձ?դամ~~անդամ:

2. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակները հանձնելու ժամկետները սահմանում է Կառավարությունը:

3. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակը ստեղծագործության համահեղինակների շնորհվելու դեպքում մրցանակի մաս կազմող դրամական ~~պարգեւը~~պարգևը հավասար բաշխվում է համահեղինակների ~~միջեւ~~միջև, յուրաքանչյուրին հանձնվում է ~~նաեւ~~նաև կրծքանշան ~~եւ~~և վկայագիր:

4. Մահացած դափնեկրի կրծքանշանը ~~եւ~~և վկայագիրը հանձնվում են նրա ընտանիքին, իսկ դրամական ~~պարգեւը~~պարգևը փոխանցվում է նրա ժառանգներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՔՆԵՐԸ

Հոդված ~~9.~~ 11. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների բաղադրիչները

1. Գրականության ~~եւ~~և հրապարակախոսության, երաժշտության ~~եւ~~և կատարողական արվեստների, կերպարվեստի, թատերական արվեստի, կինոարվեստի, ճարտարապետության ~~եւ~~և քաղաքաշինության, ճշգրիտ ~~եւ~~և բնական գիտությունների, հումանիտար ~~եւ~~և հասարակական գիտությունների ոլորտներում որպես Հայաստանի

Հանրապետության պետական մրցանակ շնորհվում են մրցանակի դափնեկրի կրծքանշան, վկայագիր ~~եւ~~և դրամական ~~պարգեւ~~պարգև:

2. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի համար շնորհվում են մրցանակի դափնեկրի դիպլոմ, պատվոնշան՝ այն հավաստող հավաստագրով, դրամական ~~պարգեւ~~պարգև, ինչպես ~~նաեւ~~նաև դրամական միջոցներ՝ սույն հոդվածի 3-րդ ~~եւ~~և 4-րդ մասերով սահմանված կարգով տնօրինելու իրավունքով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դրամական միջոցները, մրցանակ ստանալու հաջորդ երկու տարվա ընթացքում, օգտագործվում են Հայաստանի Հանրապետությունում աստղաֆիզիկայի, ինչպես ~~նաեւ~~նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառների հետագա զարգացման համար ըստ ~~հետեւյալ~~հետևյալ նպատակների՝

1) գիտական հետազոտությունների աջակցության մրցույթի կազմակերպմանը.

2) գիտաշխատողների՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններ գործուղումների ֆինանսավորմանը.

3) Հայաստանի Հանրապետությունում գիտաժողովների կազմակերպմանը.

4) պետական բուհերում մագիստրոսի ուսումնական ծրագրով ուսումնառող ուսանողների կրթաթոշակներին ուղղելու համար.

5) ~~դափնեկրի (դափնեկիրների) եւ~~ մրցանակի արժանացած աշխատանքի և դափնեկրի (դափնեկիրների) այլ աշխատանքների հանրայնացման համար:

4. Մրցանակակիրը սույն հոդվածի 3-րդ մասի 2-5-րդ կետերով նախատեսված միջոցառումների ֆինանսական միջոցների չօգտագործման կամ ոչ լրիվ օգտագործման դեպքում հավելյալ միջոցներն ուղղում է սույն հոդվածի 3-րդ մասի ——— 1-ին կետով նախատեսված մրցույթի կազմակերպմանը, իսկ վերջինիս ֆինանսական միջոցների չօգտագործման կամ ոչ լրիվ օգտագործման դեպքում հավելյալ ֆինանսական միջոցները գումարում է գիտական հետազոտությունների աջակցության հաջորդ մրցույթի կազմակերպման ֆինանսական միջոցներին:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցառումների իրականացման պայմանները, միջոցառումների համակարգման, վերահսկման, ինչպես նաեւ դրամական միջոցները մրցանակակրին փոխանցելու կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Բարձր տեխնոլոգիաների բնագավառում համաշխարհային ներդրման համար որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում են հուշամեդալ, վկայագիր ~~եւ~~ և հուշախորհրդանիշ:

7. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում է վկայագիր և հուշամեդալ:

8. Գրականության ~~եւ~~ և արվեստի, ճարտարապետության ~~եւ~~ և քաղաքաշինության, ճշգրիտ ~~եւ~~ և բնական գիտությունների, հումանիտար ~~եւ~~ և հասարակական գիտությունների բնագավառներում շնորհվող Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիրների վկայագրերի ~~ձեւը~~ձևը, դափնեկրի կրծքանշանի նկարագրությունը ~~եւ ձեւ~~և ձևը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ոլորտում ձեռքբերման համար դափնեկրի վկայագրի ձևը, բարձր տեխնոլոգիաների բնագավառում համաշխարհային ներդրման համար դափնեկրի վկայագրի ~~ձեւը~~ձևը, դափնեկրի հուշամեդալի, հուշախորհրդանիշի նկարագրությունը ~~եւ ձեւ~~և ձևը, Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի դիպլոմի ~~ձեւը~~ձևը, պատվոնշանի ~~ձեւը եւ~~ձևը և նկարագիրը, պատվոնշանը հավաստող հավաստագրի ~~ձեւը~~ձևը սահմանում է Կառավարությունը:

~~8~~9. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ ~~եւ~~ և 3-րդ մասերում նշված դրամական ~~պարգեւների~~ ~~եւ~~պարգևների և դրամական միջոցների չափերը սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված ~~10~~12. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակաբաշխության ~~եւ~~և մրցանակի հավաստիքների պատրաստման ֆինանսավորումը

1. Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովների գործունեության, մրցանակաբաշխության կազմակերպման, մրցանակների մաս կազմող վկայագրերի, կրծքանշանների, հուշամեդալների, հուշախորհրդանիշի, Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրի դիպլոմի, պատվոնշանի ~~եւ~~և այն հավաստող հավաստագրի պատրաստման ~~եւ~~և Հայաստանի Հանրապետության պետական

մրցանակների մաս կազմող դրամական պարգեւների ~~եւ~~և դրամական միջոցների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես ~~նաեւ~~նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ 7

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված ~~11.~~13. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված ~~12.~~14. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ~~եռամսյա~~հնգամսյա ժամկետում ընդունվում են սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, 4-րդ հոդվածի ~~3~~ 7-րդ~~, 5-րդ հոդվածի 2-րդ, 6~~ մասով, 7-րդ հոդվածի ~~6~~9-րդ~~ եւ 7~~, 13-րդ~~,~~ և 14-րդ մասերով, 8-րդ հոդվածի 2-րդ~~, 9~~ մասով, 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 11-րդ հոդվածի 5-րդ,~~ 7-րդ եւ~~ 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված իրավական ակտերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (Կ-342-05.11.2019-ԳԿ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	**Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	**5**
1	Կառավարություն	Նախագիծ	Նախագծում կատարվել են հետևյալ փոփոխությունները (տես տեղեկանքը)	Ընդունվել է	Ընդունվել է
2	«Բարգավաճ Հայաստան» խմբակցությունն	1. Հոդված 4-ի 2-րդ մասի 1-ին կետ	«երկու» բառը փոխարինել «երեք» բառով	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխության համաձայն՝ ի թիվս այլ ոլորտների նաև գրականության, հրապարակախոսության և արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների,	Ընդունվել է

				աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառներում պետական մրցանակի ներկայացման ժամկետ է սահմանվել մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման ժամկետն **ավարտվելու օրվան նախորդող երեք տարին:**	
3		2. Հոդված 4-ի 2-րդ մասի 2-րդ կետ	«մեկ» բառը փոխարինել «երկու» բառով	Չի ընդունվել: Նախագծով առաջարկվում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ մրցանակի հայցման առաջարկությունների ներկայացման վերաբերյալ հարցերը կարգավորել Կառավարության որոշմամբ: Այդ պատճառով նշված իրավակարգավորումը ամբողջությամբ հանվել է նախագծից: Բացի այդ հաշվի է առնվել նախկինում տվյալ ոլորտում առաջին անգամ իրագործման պահից շատ ավելի երկար ժամանակ անցած դեպքերում մրցանակի	Չի ընդունվել

				շնորհման պրակտիկան:	
4		3.Հոդված 6.-ի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ	«6.Հանձնաժողովների, մրցանակաբաշխության կոմիտեի անհատական կազմերը հաստատվում են համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող եւ իրականացնող պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:»	Չի Ընդունվել: Նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ և 14-րդ մասերով նշված լիազորությունը վերապահվել է Վարչապետին:	Չի ընդունվել
5		4. Հոդված 6-ը լրացնել նոր՝ 8-րդ մասով	«Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեների կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Ազգային Ժողովի,դատական մարմինների,	Չի ընդունվել: Մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը, ըստ Նախագծի 7-րդ հոդվածի 14-րդ կետի, սահմանում է Կառավարությունը: Իսկ հանձնաժողովների ձևավորման կարգը նախատեսվել է 7-րդ հոդվածի 2-րդ մասով:	

			համապատասխան ոլորտի բարձրագույն ուսումնական և գիտական հաստատությունների գիտական աստիճան ունեցող, ստեղծագործական միությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:»		
6		5.Հոդված 6-ը լրացնել նոր՝ 9-րդ մասով	«Հանձնաժողովները և մրցանակաբաշխության կոմիտեն կազմավորվում են մրցութային հիմունքով»:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 7-րդ հոդվածի 8-րդ մասով հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրման ենթակա թեկնածուների ընտրությունը նախատեսվում է իրականացնել **մրցութային կարգով**: Մասնավորապես, Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող **նախարարությունը** հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալուց առնվազն երեսուն օր առաջ հայտարարում է մրցույթ, որի	Ընդունվել է

				շրջանակներում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են մեկական թեկնածու: Իսկ մրցույթի արդյունքում ընտրված թեկնածուների վերաբերյալ տվյալները ներկայացվում են վարչապետի աշխատակազմ:	
7	Արսեն Ջուլֆալակյան	Նախագիծ	1. ՀՀ պետական մրցանակների ցակում ներառել սպորտի բնագավառը, քանի որ նաև այդ բնագավառում ձեռք բերված հաջողություններն ու նվաճումներն են մեծապես նպաստում պետության հեղինակության բարձրացմանը և միջազգային ճանաչմանը: Առաջարկում եմ պետական մրցանակների համար սահմանել չափորոշիչներ՝ պետական մրցանակներ շնորհել օլիմպիական խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերից չեմպիոն դարձած մարզիկին և օլիմպիական խաղերի ծրագրով նախատեսված մարզաձևերից աշխարհի առաջնության կրկնակի չեմպիոն դարձած մարզիկին,	Ընդունվել է մասնակի: Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով ՀՀ պետական մրցանակների թվում նախատեսվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ձեռքբերման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակը: Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել են մրցանակների հավակնորդների ընտրության չափանիշները: Մասնավորապես, մրցանակների հավակնորդների ընտրությունն իրականացվում է՝ հիմք ընդունելով ստեղծագործությունների, հայտնագործությունների (գյուտերի) եւ աշխատանքների	Ընդունվել է

			ինչպես նաև վերոնշյալ տիտղոսները նվաճած մարզիկների մարզիչներին: Նշեմ նաև, որ նորանկախ ՀՀ պատմության մեջ նման տիտղոսակիրների թիվը ներկա պահին չի գերազանցում 10-ը:	արժեքավորությունը, նշանակությունը տվյալ ոլորտի զարգացման համար և այլ չափանիշներ, որոնք սահմանվում են հանձնաժողովների կամ մրցանակաբաշխության կոմիտեի կողմից:	
8		Նախագծի 6-րդ հոդվածի 6-րդ կետ	2. Սույն նախագծի 6-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովները, մրցանակաբաշխության կոմիտեն ստեղծվում և դրանց անհատական կազմերը հաստատվում են համապատասխան ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի կողմից:Հանձնաժողովների և մրցանակաբաշխության կոմիտեի անդամների համար չկան օրենքով սահմանված որևիցե չափորոշիչներ, ինչը իր մեջ ռիսկայի գործոններ է պարունակում: Վերոգրյալից ելնելով կարծում եմ ավելի նպատակահարմար կլինի սահմանել չափորոշիչներ անհատական կազմերի համար:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է հանձնաժողովի ձևավորման կարգը, իսկ նույն հոդվածի 12-րդ և 14-րդ մասերի համաձայն՝ հանձնաժողովների, մրցանակաբաշխության կոմիտեի անհատական կազմը հաստատում է վարչապետը: Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել են այն չափանիշները, որոնց պետք է համապատասխանի հանձնաժողովի անդամը, իսկ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսվել են հանձնաժողովի անդամ ընտրվելու համար արգելք հանդիսացող հանգամանքները: Մրցանակաբաշխության կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը, ըստ	Ընդունվել է

				Նախագծի 7-րդ հոդվածի 14-րդ կետի, սահմանում է Կառավարությունը:	
9		Նախագիծ	3. Պետական մրցանակների ոլորտային դասակարգման վերաբերյալ առաջարկում եմ ավելի համընդհանուր դասակարգում իրականացնել, օրինակ՝ ոչ թե առանձնացնել կերպարվեստի ոլորտ, թատերական արվեստի ոլորտ,կինոարվեստի ոլորտ, այլ նշել արվեստի ոլորտ, որը կներառի վերոշարադրյալ բոլոր ոլորտները, քնաի որ տվյալ պարագայում կա հավանականություն, որ կարող է լինել ինչ-որ բարձրարժեք աշխատանք կամ ստեղծագործություն, որը չի արժանանա պետական մրցանակի, քանի որ տվյալ ոլորտը ներառված չէ ցանկի մեջ, ինչ արդարացի չէ և ամենակարևորն այնն է, որ չկա հիմնավորում, թե ինչու ներառված չէ: Տվյալ փոփոխությունը ավելի ճկուն, բազմակողմանի և համընդհանուր կդարձնի այս օրենքի նախագիծը: Այս նախագծի հիմնական	Չի ընդունվել: Նախագծով փորձ է կատարվել հստակ նշել Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների բոլոր հնարավոր տեսակները:	Չի ընդունվել

			նպատակն է պետական մրցանակներ շնորհել արժեքավոր աշխատանքների ու ստեղծագործությունների համար, իսկ նմանատիպ ոլորտային դասակարգումը չի ընձեռում այդ հնարավորությունը, այլ սահմանափակում է այն, դուրս թողնելով բնագավառներ, որոնք օրեցօր զարգանում են և միանշանակ արժանի են բարձր գնահատականի:		